

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ



891.99 Մ

Ա-91

ԽԵՏԱՀԱՍՏ
1.9.3.6
ՅԵՐԵՎԱՆ

ԱԿԱՐՆԵՐԸ

ԱՐԱՐԱԿԱՆԱՐՁԱՆ



1

Շատ ծիծաղեց Հրաչն այդ որը, շատ ուրախացավ:
Նախորդ յերեկոյան, հեռու գյուղից իրենց մոտ հյուր
եր յեկել իրենց հորյեղբայրն իր կնոջ հետ։ Նրանց տղան,
Գագիկը, Հրաչից մեծ երև և ծնողները նրան ել եյին իրենց
հետ քաղաք բերել։

Գագիկն առաջ մի քանի անգամ ել եր քաղաք յեկել։
Նա Հրաչին արդեն ճանաչում եր։ Յերեկոյան, քնելուց
առաջ, նրանք շատ խաղացին իրար հետ և ավելի մտեր-
մացան։

Հանկարծ, խորը քնի մեջ, Հրաչը լսեց նրա ձայնը.
— Վեր կաց, Հրաչ, լուսացել ե, աքաղաղները կան-
չում են։

— Ի՞նչ աքաղաղ, — զարմացած վեր կացավ նստեց Հրաչը։
— Չես լսում...»

— Ախր դրանք գործարանների սուլիչներն են, — ծիծա-
ղեց Հրաչը։ — Վոր դուրս գնանք, ցույց կտամ։

Գագիկն այնպես ցույց տվեց, իբրև թե զարմացավ։

Յերբ անկողնից վեր կացան, Գագիկը մոտեցավ գրա-
սեղանին, վոր լույսը մարի։ Հրաչի հայրիկը զիշերն աշխա-
տել երև և առավոտյան գործի գնալիս, ելեկտրականությու-
նը վառած եր թողել։

— Փուհ, — փշեց Գագիկը։

Բան դուրս չեկավ։

— Փուհ, փշեց նորից։

— Եղանակի լինի, — նորից ծիծաղեց Հրաչը, — յեկ եստե-
ղեց մարիր...»


Յեկ նա նրան տարավ ելեկտրական կոճակի մոտ։

— Փուհ, — փշեց Գագիկը կոճակի վրա։

Հրաչը ծիծաղից թուլացավ։

— Մի փշիր, այլ պտտացրու, — ասաց նա ծիծաղի միջից։

Գագիկն ելի մի քանի այդպիսի բաներ արեց և Հրաչը
շատ ուրախացավ։



2

Քիչ հետո նրանք դուրս յեկան զբոսնելու։ Հրաչը վո-
րոշեց Գագիկին տրամվայ նստացնել, ման ածել քաղաքով,
ծանոթացնել։ Յերբ նրանք իրենց փողոցի անկյունից թեք-
վեցին — տրամվայն արդեն կանգնած եր։

— Շուտ, նստենք, քանի չի գնացել, — շտապեցրեց
Հրաչը և ոգնեց նրան տրամվայ բարձրանալու։

— Ինչու ես շտապում, — ժպտաց Գագիկը. — ախր տես
յեզներն ել դեռ չեն լծել։

Հրաչն սկսեց ելի ծիծաղեր։ Ուրիշներն ել ծիծաղեցին։

— Առանց յեզի ե գնում, — բացատրեց Հրաչը. — Ելեկ-
տրական ուժով ե գնում։

Հրաչն սկսեց մանրամասն բացատրեց։ Տրամվայը շարժ-
վեց և ապա սկսեց արագ գնալ։

— Սպասիր, — վախեցած ընդհատեց Գագիկը Հրաչին.
սպասիր, խրտնեց։

— Ելեկտրական ուժը... Հիմի շուռ կտա...»

Ուժեղ ծիծաղի պատճառով Հրաչի աչքերից արցունք-
ներ գլուրկեցին։ Նա յերկար ժամանակ չեր կարողանում
ծիծաղը դաղարեցնել, վոր բացատրի, թե ելեկտրական ուժը
չի կարող խրտնել։




Հասան այգի։ Հրաչն իսկույն վազ տվեց, կարուսելի դըամարկղից յերկու տոմս գնեց և Գագիկի հետ մոտեցավ կարուսելի ճաղի ցանկապատին։ Մի մարդ տոմսերն առավ և իրենց ներս թողեց։

— Ձի նստենք, թե կառք, հարցրեց Հրաչը — Նայիր, ինչ լավ ձիեր են. փայտից են շինված, բայց իսկականի նման են։

— Ձի նստենք. — վորոշեց Գագիկը։

Նրանք նստեցին։ Ուրիշ շատ յերեխաներ նույնպես, յեկան նստեցին։ Յերբ բոլոր սեղանները պատվիցին, զանգը տվեց և կարուսելը շարժվեց։ Ձիերն ու գանձերը լուսական սկսեցին պտտվել։



— Ուր ենք գնում, — հարցրեց Գագիկը։
Հրաչն ամուռ բռնեց իր ձիուց, վոր վայր չընկնի,
վորովհետև ծիծաղից թուլացել եր։

— Կլոր ենք պտտվում, — հազիվ ասաց նա, և սկսեց նորից
ծիծաղել։

Գագիկն ել վարակվեց նրա ծիծաղից, ինքն ել ծիծա-
ղեց։ Քիչ հետո, յերբ ձիերն ու կառքերն սկսեցին ավելի
արագ պահանալ, նա նորից հարց տվեց։

— Յերբ ենք հասնելու, Հրաչ։

— Շտապնում ես, — հարցրեց Հրաչը նորից ծիծաղելով։


— Զե։ Ուզում եմ շատ գնանք։ Բայց յեթե հետո վոտ-
քով վերադառնանք, կհոգնենք...»

Յերբ նրանք վար իջան, Հրաչը մանրամասն բացա-
տրեց կարուսելի մասին։ Գագիկն այնպես եր լսում, կար-
ծես իսկապես, վոչինչ չգիտե։

Մինչև յերեկո Գագիկը նորանոր բաներ եր անում, իսկ
Հրաչը շարունակ ծիծաղում եր ու բացատրում։

— Վոչինչ, կսովորես, — քաջալերում եր նա։

— Իսկ դու գյուղում յեղել ես, — հանկարծ հարցրեց
Գագիկը։



— Վո՞չ:

— Ե, — ծիծաղեց Գագիկը նրա վրա: — Դու վոր գյուղ
գաս, ավելի կզարմանաս: Մենք մի են տեսակ լամպ ենք
գառում, վոր, ծիշտ ե, շատ լույս չի տալիս, բայց ինչքան



Ել կոճակ պտտացնես՝ չի մարի: Ուզում ես՝ տանը յեղած բոլոր կոճակները պտտացրու՝ ելի չի մարի: Հետո, մենք մի են տեսակ սայլ ունենք, վորը, ծիշտ ե, կամաց ե գնում, բայց յեղով ե գնում: Ինչքան ուզում ես ելեկտրական ուժ տուր, զանգտուր՝ տեղից չի շարժվի, մինչև ճիպուրդ չբարձրացնես: Հետո, մենք ենպիսի ծիեր ունենք, վոր յեթե նստես ու քշես, ուզածդ տեղը կտանի: Զերի նման չի, վոր գնա, գնա, բայց քեզ ելի նույն տեղը թողնի... Բայս... Վոր գաս գյուղ ուզզակի կշմես:

— Իսկ ձեր վոչ մի բանը մերին նման չի, — հարցըրեց Հրաչը նորից ծիծաղելով, վորովիետև շատ լավ գիտեր, թե ինչ ե նավթի լամպը, յեզասայլը, ձին:

— Զե, ինչու, աքլորներն իրար նման են, — պատասխանեց Գագիկը: — Մեր աքլորներն ել են կտուրի ծայրից ծուղրուղու կանչում, ձերն ել:

Հրաչը մի անգամ ել ծիծաղեց և քնեց:

— Հրաչ, լսվեց հանկարծ նրա ականջի տակ:

Հրաչը վեր նայեց: Գագիկը ծիծաղում եր:


— Դու հաստատ հավատացի՞ր, վոր յես այդ բոլորը չգիտեյի:

— Ուրեմն գիտե՞յիր, — զարմացած նստեց Հրաչը:

Գագիկը շարունակում եր ծիծաղել:

Հրաչը նայեց նրան, ուզեց բարկանալ, բայց քունը հաղթեց:

Քիչ հետո լսելով ընկերոջ մշմշոցը, քնեց նաև՝
նրանք յերկուսն ել գոյն եմին ուրախ որվանի:



NL0391704

ԳԻԱԸ 75 ԿՈՊ.

609

7351

Պատ. Խմբագիր՝ Սիրտս
Տեխ. Խմբագիր՝ Ա. Գառպարյան
Մրգագիշ՝ Ա. Մողաքանյան



Մ. АРМЕН
ВЕСЕЛЫЙ ДЕН
ГИЭ ССРА Эривань, 1936

Դաշտի փողոց 4, 289, պատվեր 1067, տիրած 5000, Հրատարակ 3457.
Գետերանի տպարան, Ցերելան, Ռ Գևորգ 4